

Արձանագրություն № 3 (303)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ-ի նոյեմբերի 27-ի նիստի

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 27 անդամներից 23-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Գի տխ ո ր հ ր դ ի ն ի ս տ ի ն ն ե ր կ ա է ԵՊՀ պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը:

Հաշվի առնելով, որ համաձայն ֆակուլտետի կանոնադրության դեկանը չի կարող լինել դեկանի հաշվետվության նպատակով հրավիրվող խորհրդի նիստերի նախագահողը, և որ այդ նիստերը վարում է գիտական խորհրդի կողմից ընտրված նախագահողը՝ դեկան, դոցենտ Պ.Բալայանը առաջարկեց առաջադրել նախագահողի թեկնածուներ: Խորհրդի անդամների կողմից առաջադրվեցին պրոֆ. Լ.Բ. Մաթևոսյանի և դոցենտ Լ.Գ.Հակոբյանի թեկնածությունները: Բաց քվեարկությամբ նախագահող ընտրվեց Լ.Հակոբյանը: Այնուհետև նախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվություն:**
2. **Ռուս բանասիրության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:**

ԼՍԵՑԻՆ . Ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ.Բ. Բալայանը ներկայացրեց 2016-2017 ու ս ու մ ն ակ ան տար վ ա հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն ը :

Դեկանը նշեց, որ ներկա պահին ֆակուլտետում սովորում է 201 ուսանող, որից 133 բակալավրի ծրագրով, 27 ուսանող մագիստրատուրայում, 37 ուսանող հեռակա բաժնում: Ունենք նաև 4 ուսանող մագիստրատուրայում Չինաստանից: Առաջին կուրս է ընդունվել 37 ուսանող, որը հանրապետության այս մասնագիտությամբ ընդունվածների 50 տոկոսն է:

Ֆակուլտետի դասախոսները այցելում են շրջանների և մայրաքաղաքի դպրոցները, հանդիպում ուսուցիչների և աշակերտների հետ: Մեր դասախոսները դասավանդում են 3 դպրոցում:

Ֆակուլտետում դասավանդում են 67 դասախոս, որից 4-ը՝ դոկտոր-պրոֆեսոր, 1-ը պրոֆեսոր, 18-ը դոցենտ, 6-ը գիտությունների թեկնածու - ասիստենտ, 4 -ը ասիստենտ, 34 դասախոս, 2 ասպիրանտ, 1 հայցորդ:

Անցած տարվա ընթացքում հրատարակվել է 2 մենագրություն, 87 հոդված:

Ասպիրանտները մասնակցել են միջազգային կոնֆերանսներին:

Ֆակուլտետի 21 դասախոս քննություն են հանձնել և ստացել C 1 հավաստագիր:

Ֆակուլտետում անց է կացվում արտալսարանային աշխատանք, դպրոցական և համալսարանական օլիմպիադա:

Հիմնովին վերանայվել են մագիստրոսական ծրագրերը:

Մշտապես վերանայվում և նորոգվում են ուսումնական պլանները:

Համեմատելով ֆակուլտետի զարգացման ծրագրի դրույթների հետ, փաստում ենք

- **Հակագրագողություն** ծրագրի ակտիվ կիրառումը,
- Դասախոսների թեստավորման անցկացումը
- ԵՊՀ ուսանողական օլիմպիադայի անցկացումը
- Դասախոսների աշխատանքը դիմորդների հետ
- Դասախոսությունների անցկացումը հանրապետության շրջաններում
- Ուսումնական նոր ծրագրի մշակումը
- Նոր ռուսաց լեզվի դասագրքի հանձնումը հրատարակչության խորհուրդ

Անշուշտ ունենք խնդիրներ, կապված միասնական քննությունների հետ:

Բավականին բարդ է ընդունելության թեստը անգլերենի հետ համեմատ:

Խնդիրներ ունենք մագիստրատուրա ընդունելության հետ - ընդամենը 10 տոկոսն է գնում:

Դեկանի խոսքերով, մագիստրատուրայում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպելու նպատակով առաջարկվում է մագիստրատուրայում կրթությունը կազմակերպել 1 կամ 1.5 տարով:

Դեկանի ելույթից հետո արտահայտվեցին ամբիոնի վարիչներ Բ. Խոջումյանը, Ս.Լալայանը, Լ.Հակոբյանը? Ն.Գոնչարը:

Ելույթ ունեցավ նաև ԵՊՀ-ի պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը: Առաջարկվեց դեկանի աշխատանքը գնահատել բավարար: Բաց քվեարկությամբ 2016-2017 ուս. տարվա դեկանի աշխատանքը միաձայն գնահատվեց բավարար:

Պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյանը նաև պատասխանեց ելույթներում հնչեցրած հարցերին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական:

2. ԼՍԵՑԻՆ` ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբիոնների որոշումները` հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման վերաբերյալ` հայցելով Խորհրդին հաստատել դրանք:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ` պրոֆ. Լ. Մաթևոսյանը, պրոֆ. Ռ. Գրձելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ` Ատեստավորել ներքոնշյալ անձանց`

Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի
հեռակա ասպիրանտ Մարիամ Գեղամի Արշակյանին, հեռակա ասպիրանտ Աննա
Մարտիրոսովնա Խիզանցյանին և հայցորդ Վերա Արթուրի Ադամյանին:

Նախագահող՝

Լ.Գ. ՀԱԿՈՒՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ